**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

**<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>**

**ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Բողոքի ծածկագիրը**՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/44

**Բողոքի ներկայացման ամսաթիվը՝** 02.06.2021թ.

**Շտկված բողոքի ամսաթիվը՝** 04.06.2021թ.

**Բողոք բերող անձ՝** «Մեգիէլ» ՍՊԸ

**Պատվիրատու՝** «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ

**Գնման ընթացակարգի ծածկագիրը՝** «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» բաց մրցույթ

**Գնման առարկան** բժշկական նշանակության ապրենքների ձեռքբերում

**Բողոքի պահանջը**՝ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 1-ին, 7-8-րդ և 11-րդ չափաբաժիններում՝ բողոքով ներկայացված հիմնավորումներով:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ**
**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ**

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ք. Երևան

04.06.2021թ.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Հասցե՝ Երևան քաղ., Մելիք Ադամյան 1

Բողոք բերող անձ՝ «Մեգիէլ» ՍՊ ընկերություն,

տնօրեն Ս. Փարիզյան

Հասցե՝ Երևան քաղ., Կոմիտաս 56, 165 տարածք

էլ. փոստ՝ office@megiel.am, հեռ. 010-287070, 043-903090

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ

Հասցե՝ Երևան քաղ., Ա. Արմենակյան 108/4

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44

Գնման առարկա՝ բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

# ԲՈՂՈՔ

1. Վեճի առարկան.

1.1 «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (հետայսու՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով բաց մրցույթ, որն իրականացվելու է մեկ փուլով:

1.2 Հրավերը հրապարակվել է 05.21.2021թ եւ մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 07.06.2021թ ժամը՝ 12:00 ներառյալ: Հայտերի բացումը տեղի է ունենալու 07.06.2021թ ժամը 12:00-ին:

1.3 «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով մրցույթին մասնակցելու նպատակով ուսումնասիրելով հրավերը՝ տեխնիկական բնութագրերում արձանագրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների անհամապատասխանություն:

1.4 Ըստ Ընկերության՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման պահանջներին չեն համապատասխանում մրցույթի 1-ին, 7-8-րդ եւ 11-րդ չափաբաժինները:

2.Բողոքի փաստական եւ իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:

Հայաստանի Հանրապետություն
ք Երևան 0014
Կոմիտաս 56 165տ

Tel: (+374) 10 287070
Mob: (+374) 43 903090
E-mail: office@megiel.am

Komitas ave. 56b. 165are.
Yerevan 0014
Republic of Armenia

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ներկայացված նորմերի վերլուծությունից փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը հիմնվում է գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ եւ հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման եւ վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված եւ համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաեւ աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի եւ այլ ոչ գնային պայմանների ամբողջական եւ համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների եւ Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաեւ որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին եւ պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման (հետայսու՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ եւ արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Վիճարկվող չափաբաժինների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում նշված նորմի պահանջներին:

Վիճարկվող չափաբաժիններով խմբավորված են առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաներ, որը Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում է:

Ընթացակարգ 1-ին չափաբաժնով պահանջվում է կաթետեր ախտորոշիչ եւ պահանջվող ապրանքների մի քանի տեսակներ խմբավորված են մեկ չափաբաժնում: Խմբավորմամբ Պատվիրատուն արհեստականորեն սահմանափակում է հնարավոր մասնակիցների շրջանակը եւ նրանց միջեւ մրցակցության հնարավորությունը արդյունքում խախտելով Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջները, քանի դեռ տեխնիկական բնութագրով շարադրված տեսակները խմբավորված են մեկ չափաբաժնում, այն արտադրողները որոնք չեն արտադրում այդ տեսակներից թեկուզ մեկը զրկված են Ընթացակարգին մասնակցելու օրենքով իրենց վերապահված իրավունքն իրացնելու հնարավորությունից, ուստի Պատվիրատուն պետք է հրավերում կատարի փոփոխություն 1-ին չափաբաժով ներկայացված գնման առարկայի տեսակները տրոհի առանձին չափաբաժինների եւ յուրաքանչյուր տեսակի համար սահմանի իր տեսակին բնորոշ հստակ տեխնիկական բնութագիր:

Ընթացակարգի 7-րդ եւ 8-րդ չափաբաժիններով Պատվիրատուն պահանջում է ստենտ դեղապատ՝ դեղի ծածկույթը Էվերոլիմուս:

Չափաբաժիններվ նշված դեղանյութի մեկ տեսակի առկայությունը արհեստականորեն սահմանափակում է հնարավոր մասնակիցների շրջանակը եւ նրանց միջեւ մրցակցության հնարավորությունը, արդյունքում խախտելով Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջները:

7-րդ եւ 8-րդ չափաբաժիններով պահանջվող դեղապատ ստենտի տեխնիկական բնութագրերով պետք է դեղանյութի ծածկույթ նշվի պարզապես դեղի նյութը լիմուս ընտանիքի (զոտորոլիմուս, սիրոլիմուս եւ էվերոլիմուս), այլապես Պատվիրատուն արհեստականորեն սահմանափակում է հնարավոր մասնակիցների շրջանակը եւ մրցակցության հնարավորությունը, այդպիսով խախտելով Օրենքի 3-րդ հոդվածը, ՀՀ

Կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջը: Ի դեպ զոտորոլիմուս դեղանյութով ստենտ ձեռք է բերում, շուրջ 3 ամիս, «Մեգիէլ» ՍՊ ընկերությունից՝ առանց մրցույթի:

Բացի այդ, 7-րդ եւ 8-րդ չափաբաժիններով տրամագծի եւ երկարության միջակայք է նշված, որն ընդհանրական է, քանի որ կախված տրամագծից եւ երկարությունից, դեղապատ ստենտի տեսակը կարող է փոխվել, ուստի Պատվիրատուն հրավերում պետք է կատարի փոփոխություն հստակ նշելով իրեն անհրաժեշտ դեղապատ ստենտի ապրանքի տեսակը սահմանելով դրան բնորոշ հստակ տեխնիկական բնութագիր:

11-րդ չափաբաժնով պահանջվող փական բիոլոգիական ապրանքների տեսակները նույնպես խմբավորված են մեկ չափաբաժնով, որը՞ հանգեցնում է Օրենքի 3-րդ, 25-րդ հոդվածների եւ Կարգի 22-րդ կետի պահանջի խախտման: Նորմերի խախտման հիմնավորումները ներկայացվել են վերոգրյալով:

Ըստ էության, Պատվիրատուն, սույն բողոքով վիճարկվող բոլոր չափաբաժիններով խմբավորել է տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքներ:

Պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը պետք է լինեն հստակ ընկալելի, խոչընդոտներ չառաջացնող, տարընկալման տեղիք չտվող, մասնակցությունը՝ չսահմանափակող, հնարավոր մասնակիցների ընդլայնում եւ մրցակցություն ապահովի:

Պատվիրատուին պարտավորեցնել մեկ չափաբաժնով խմբավորված տարբեր ապրանքները ներկայացնել առանձին չափաբաժիններով, ապահովելով ոլորտը կարգավորող օրենսդրի պահանջը: Ի դեպ դրանք իմպերատիվ նորմեր են եւ հայեցողական մեկնաբանության արդյունքում հարմարությունից ելնելով առաջնորդվելու իրավասությամբ օրենսդիրը կիրառողներին չի լիազորել:

Վիճարկվող տեխնիկական բնութագրերը չեն ապահովում Օրենքի 13-րդ, 25-րդ հոդվածների եւ Կրագի 22-րդ կետի պահանջը:

**3. Բողոքի ընդունելության հիմնավորում.**

Սույն բողոքը համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին.

1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) եւ հասցեն.

2) պատվիրատուի անվանումը եւ հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը եւ առարկան.

4) վեճի առարկան եւ բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի եւ իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: ....

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Օրենսդրի կողմից սահմանված վերոնշված պահանջներն առկա են սույն բողոքում: Համաձայն նշված հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բողոքվ ներկայացված է վեճի առարկան եւ պահանջը:

Եթե բողոքով ներկայացված վեճի առարկայի եւ պահանջի միջեւ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի դիտարկմամբ կան որոշակի անհստակություններ, ապա դա ամենեփին բողոքը վերադարձնելու հիմք չի կարող լինել, իսկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմքեր «Գնումների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում:

Ներկայացված բողոքի իրավական հիմքերի եւ ապացույցների լրացման, փոփոխման նպատակով բողոքաբերը սահմանափակված չէ եւ դրանք կարող է ներկայացնել նաեւ բողոքի քննության ընթացքում, ինչ վերաբերում է բողոքի պահանջին եւ վեճի առարկային, ապա այդ առումով եւս բողոքաբերը սահմանափակված եւ կաշկանդված չէ լրացնելու եւ/կամ փոփոխելու, հստակեցնելու բողոքի քննության ընթացքում, ընդհուպ մինչեւ բողոք քննող անձի կողմից որոշում կայացնելը: Պահանջի փոփոխման, լրացման կամ նոր ապացույցներ եւ իրավական հիմքեր ներկայացնելու անհրաժեշտությունը կարող է առաջանալ նաեւ՝ կապված Պատվիրատուի ներկայացրած դիրքորոշումից:

4. Պահանջ.

Պարտավորեցնել ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 1-ին, 7-8-րդ եւ 11-րդ չափաբաժիններում՝ բողոքով ներկայացված հիմնավորումներով:

Կից ներկայացվում են.

1. Անձը հաստատող փաստաթղթի պատճեն.
2. բողոք ներկայացնելու համար վճարման անդորրագրի պատճեն:

Տնօրեն Ա. Փարիզյան